

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության
փորձագետ Գոհար Սաթունցի

Ես՝ Գոհար Սաթունցս, ՀՀ ֆինանսների նախարարության ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2024թ.-ի հունվարի 9-ից (2024թ. հունվարի 9-ին կնքված Պայմանագրի համաձայն):

2024թ.-ի հունվարի 9-ից մինչև 2024թ. մարտի 7-ը ներառյալ, համաձայն աշխատանքային ծրագրի, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- Բյուջետային վարկերից և երաշխիքներից բխող ֆիսկալ ռիսկերի բացահայտում, ազդեցության քանակական գնահատականների ստացում, վարկառուի վարկունակության և ֆինանսական վիճակի գնահատում՝ «ԴԻ ընդ ԷՅՁ», «Վ.Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն», «ՋԻ ԹԻ ԲԻՍԹԼ» կազմակերպությունների մասով, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ շնորհանդեսի ներակայացում.

- Բյուջետային վարկերի տրամադրման ընթացակարգի մշակում.


- Բնական աղետներից բխող ֆիսկալ ռիսկերի ուսումնասիրություն, գործող օրենսդրության, վերջինիս մեղմման ուղղված՝ ՀՀ-ում գործող մեխանիզմների, ինչպես նաև միջազգային փորձում առկա գնահատման և կառավարման մեթոդների ուղղությամբ ուսումնասիրության իրականացում.

- «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումների և փոփոխությունների իրականացմանն ուղղված աշխատանքներին մասնակցություն.

- «Առողջապահության ռազմավարության և համապարփակ ապահովագրության համակարգ»-ի ներդրմանն ուղղված աշխատանքներին մասնակցություն, համակարգի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն և տեղայնացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

• Այլ գերատեսչությունների կողմից ներկայացված նախագծերի, միջազգային կազմակերպություններից ստացված զեկույցների, քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի և ներկայացված առաջարկությունների ուսումնասիրություն և մասնագիտական դիրքորոշման ներկայացում:

Ֆիսկալ ռիսկերի կառավարման
վարչության փորձագետ՝



Գոհար Սաթունց